ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

5 փետրվարի 2021թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 11 անդամներից 10-ը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Մ.Ա. Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամի առաջադրում:

2. Ֆակուլտետի 2020-2021ուս. տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածուների քննարկում:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյան:

Առցանաց քվեարկությամբ՝ 10 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 2/1

Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի 1-ին հարցի՝ «գիտական դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամի առաջադրում» վերաբերյալ Մ.Զաքարյանը ներկայացրեց, որ գիտական դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամ է առաջադրում տեխ.գ.թ., դոցենտ, Ռոբերտ Մառլենի Յոլչյանին:

Բաց քվեարկությամբ՝ 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ 2.1

Գիտական դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի մրցութային հանձնաժողովի անդամ առաջադրել տեխ.գ.թ., դոցենտ Ռոբերտ Մառլենի Յոլչյանին և ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդի հաստատմանը:

Օրակարգի 2-րդ հարցի՝ «Ֆակուլտետի 2020-2021ուս. տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում», վերաբերյալ Մ.Զաքարյանը ներկայացրեց, որ «Աշխարհագրություն» մասնագիտության «Քարտեզագրություն և կադաստրային գործ» բակալավրի կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի չորրորդ կուրսի ուսանող Տիգրան Սերյոժայի Գասպարյանը յոթ կիսամյակ, իսկ Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի չորրորդ կուրսի ուսանողներ Նարե Նորայրի Քամալյանը չորս , Արայիկ Գառնիկի Շանհազարյանը չորս կիսամյակ, անընդմեջ սովորում են գերազանց:

Մ.Զաքարյանը առաջարկեց Տիգրան Գասպարյանին ներկայացնել «ԵՊՀ ԻՄ» անվանական կրթաթոշակի, Արայիկ Շանհազարյանին «Մոնթե Մելքոնյան», իսկ Նարե Քամալյանին «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ԺՊ, ք.գ.թ., դոցենտ Գ.Սիմոնյանը ներկայացրեց, որ Տիգրան Գասպարյանը յոթ կիսամյակների ընթացքում բոլոր առարկաներից ստացել է միայն գերազանց գնահատականներ, պարտաճանաչ, պատասխանատու ուսանող է, գտնում է, որ արժանի է «ԵՊՀ ԻՄ» անվանական կրթաթոշակ ստանալուն:

«Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչի ԺՊ, տեխ.գ.թ., դոցենտ, կրթական ծրագրի ղեկավար Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ Արայիկ Շահնազարյանը և Նարե Քամալյանը աշխատասեր, ակտիվ, պատասխանատու ուսանողներ են, գտնում է, որ արժանի են անվանական կրթաթոշակ ստանալուն:

Բաց քվեարկությամբ՝ 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 2.2

Երաշխավորել և ԵՊՀ ԻՄ գիտ.խորհրդի քննարկմանը ներկայացնել

1. «ԵՊՀ ԻՄ» անվանական կրթաթոշակի հավակնորդ Տիգրան Սերյոժայի Գասպարյանին ,
2. «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակի հավակնորդ Նարե Նորայրի Քամալյանին,
3. «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի հավակնորդ Արայիկ Գառնիկի Շահնազարյանին :

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ